ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեսքը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2014 թվականի մարտի 12-ի թիվ 1 որոշմամբ

Ծածկագիրը՝ **ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01**

Պատվիրատուն՝ ՀՀ ԱՆ «Նորք»ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Երևան, Արմենակյան 153 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Անվտանգության և պահակային ծառայությունների մատուցման» պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում **անվտանգության և պահակային ծառայությունները**:

Գնումը ֆինանսավորվելու է ՀՀ ԱՆ «Նորք»ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի 2014թ. թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Երևան, Արմենակյան 153 հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված «10»-րդ օրվա ժամը 12:00-ը: Պատվիրատուն պարտավորվում է թղթային ձևով հրավեր ստանալու պահանջ ներկայացնելու օրվա ընթացքում թղթային հրավերը անվճար տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Երևան, Արմենակյան 153 հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված «10»-րդ օրվա ժամը 12:00-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին” ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն” ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

ՀՀ ԱՆ «Նորք»ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ

Հաստատված է
ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
2014 թվականի մարտի 12-ի թիվ 1 որոշմամբ

Հայաստանի Հանրապետության Առողջապահության Նախարարության
«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց
Փակ Բաժնետիրական Ընկերություն

Հ Ր Ա Վ Ե Ր

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության և պահակային ծառայություններ ձեռքբերելու նպատակով կազմակերպված պարզեցված ընթացակարգի

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի (այսուհետև Պատվիրատու) կարիքների համար անվտանգության և պահակային ծառայություններ ձեռքբերելու նպատակով, **ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01** ծածկագրով անցկացվող պարզեցված ընթացակարգի (այսուհետև ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) և ՀՀ կառավարության 10/02/2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև Կարգ) պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև նաև Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձին (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների կամ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Սույն ընթացակարգի անցկացման հետ կապված՝ սույն հրավերով չնախատեսված հարաբերությունները կարգավորում են Օրենքով և Կարգով:

Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեներն են՝ norqinf@mail.ru;norqinf@yahoo.com

ՄԱՍ I

1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերումը:

Գնման առարկայի բնութագիրը կազմում է կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է հրավերի (հավելված 7) -ում:

2. Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները, դրանց գնահատման պայմանները

2.1 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

Նախկինում կատարված պայմանագրերի			
Առարկան	Ծավալը	գումարը (դրամ)	պատվիրատուի անվանումը և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	2	3	4
Տարեթիվ՝ ..... թվական			
1.			
2.			

2) մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում անվտանգության և պահակային ծառայությունների մատուցումը.

- «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը պակաս չէ սույն գնման ընթացակարգի շրջանակներում կատարվող գնումների ծավալի (սույն գնման ընթացակագի շրջանակներում ձեռքբերվելիք ծառայության ծավալը կազմում է՝ շենքեր շինությունների , օժանդակ տարածքի և բակային տարածքների մակերեսը՝ 28300 ք.մ) ոչ պակաս, քան հիսուն տոկոսից: Նմանատիպ են համարվում անվտանգության և պահակային ծառայությունների մատուցումը.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի

հաստատած՝ պայմանագրի կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է վարկային գծի տրամադրման մասին բանկի հետ կնքված պայմանագիր կամ բանկային երաշխիք: Ընդ որում, վարկային գծի կամ բանկային երաշխիքի չափը չպետք է պակաս լինի մասնակցի գնային առաջարկի ամսեկան գումարի տասը տոկոսից, իսկ վարկային գծի տրամադրման պայմանագրի կամ բանկային երաշխիքի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի պայմանագրի ամբողջ ծավալով կատարման վերջնաժամկետից.

2) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1 Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին՝ գրավոր: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ:

3.2 Պատվիրատուն պարզաբանումը տրամադրում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի I մասի 3.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետից առնվազն հինգ օրացուցային օր առաջ կարող են հրավերում կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում: Սույն ընթացակարգի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում հայտը ներկայացրած մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

3.5 Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

4. Հայտը ներկայացնել ու կարգը

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում հայտ:

Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ 'Հայտերը պատրաստելու' հրահանգում:

4.2 Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 12:00-ն, ք. Երևան, Արմենակյան153 հասցեով: Հայտերը, ներառյալ սույն հրավերի 7.7 կետով նախատեսված գրությունը, ստանում, իսկ հայտերը նաև գրանցամատյանում գրանցում է Ա.Բաղալովը (հեռ. (099) 801-800): Հայտերը գրանցվում են գրանցամատյանում, ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում, որին կցվում է

բ. գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ.

գ. հայտի ապահովում՝ մեկ բնօրինակ.

դ. սույն հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին մասին տվյալները (փաստաթղթերը)՝ մեկ բնօրինակ.

ե. էլեկտրոնային փոստի հասցեն.

զ. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին՝ մեկ բնօրինակ:

4.4 Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

Տեղեկությունների՝ սույն հրավերով նախատեսված դեպքերում էլեկտրոնային եղանակով ծանուցման դեպքում պարտադիր է մասնակցի կողմից ծանուցման ստացման ավտոմատ եղանակով հետ հաստատումը:

4.5 Կնքվող պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը: Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները).

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին

ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ.

4) մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների համար:

4.6 Մասնակիցները ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը

5.1 Հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտի փոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ 'Հայտը պատրաստելու' հրահանգի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով 'փոփոխում' բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

6. Հայտի ապահովումը

6.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի օրինակելի ձևը ներկայացված է սույն հրավերի N 5 հավելվածով:

6.2 Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

6.3 Հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

6.4 Սույն հրավերի 3-րդ բաժնին համապատասխան՝ սույն հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտեր ներկայացրած Մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց

ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը, կամ ներկայացնել հայտի նոր ապահովում: Հակառակ դեպքում հայտը մերժվում է:

7. Հայտերի բացումը

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստում՝ ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Արմենակյան 153 հասցեում, նիստերի դահլիճում: Մասնակիցը կամ նրա ներկայացուցիչը կարող է ներկա գտնվել գնահատող հանձնաժողովի նիստերի աշխատանքներին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

7.2 Հայտերի բացումն իրականացվելու է ՀՀ կառավարության 10/02/11թ. N 168-Ն որոշմամբ հաստատված 'Գնումների գործընթացի կազմակերպման' կարգի համաձայն, այդ թվում հայտերի բացման նիստում հանձնաժողովը գնահատում է՝

ա) հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը.

բ) բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը.

գ) յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հրավերով սահմանված պայմաններին:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակցին որոշելու համար գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 2.2.6 ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

7.4 Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

7.5 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում՝

1) ընտրված մասնակցին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները).

2) հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

3) բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը.

4) յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակացությունների համար, նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը.

5) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

7.6 Հայտերի բացման նիստին հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

7.7 Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հետո առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ (հավելված 6) հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ սույն հրավերի I մասի 2.1 կետով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը

8.1 Սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝ հանձնաժողովը գնահատում է ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը սույն հրավերով սահմանված պահանջներին:

Սույն կետով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում՝ հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ քարտուղարը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար.

2) չշտկվելու դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

8.2. Հայտը (ներկայացված փաստաթղթերը) գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 8.1 կետով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) համապատասխանում են սույն հրավերով նախատեսված պահանջներին: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.3. Սույն հրավերի 8.2 կետի համաձայն գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

8.6 Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ մասնակցի մասնակցությունը դադարեցվում է, այդ թվում՝ այդ մասնակցի հետ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը պատվիրատուների կողմից միակողմանիորեն լուծվում են.

2) մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում.

3) ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Սույն հրավերի 8.6 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.8 Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.9 Մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին պատվիրատուն հայտարարում է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին.

Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը 5 օրացուցային օր է:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը գնահատման կամ ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել գնահատման կամ ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է այդ արձանագրություններին:

9. Պայմանագրի կնքումը

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովում, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

9.4 Մինչև սույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

10. Պայմանագրի ապահովումը

10.1 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

10.2 Պայմանագրի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին՝ պայմանագրի կատարման, ներառյալ երաշխիքային սպասարկման ժամկետը, ավարտից հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում:

11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

11.1 Հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

11.3 Տեղեկագրում հրապարակելու նպատակով, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.2 Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

12.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը փոխանցվում է «Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Գնումների բողոքարկման խուրդուր բողոք ներկայացվելու դեպքում մասնակիցը բողոքը ներկայացնում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին, ք. Երևանի Կոմիտասի 54/բ հասցեով:

12.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն հրավերի Ի-ին մասի 8.9 կետով սահմանված անգործության ժամանակահատվածում:

12.6 Գնումների բողոքների ներկայացման, քննման և որոշումների կայացման հետ կապված հարաբերությունները սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով:

ՄԱՍ II

ՀՐԱՀԱՆԳ
ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Հայտը, ներառյալ դրանում ներառվող բոլոր փաստաթղթերը, պետք է կազմված լինեն հայերեն:

2. Հայտը

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը՝ սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

2.2 Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված (եթե կիրառելի է)՝

2.2.1 դիմում՝ գնման ընթացակարգին մասնակցելու համար (հավելված N 1).

2.2.2 հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության և գերիշխող դիրքի չարաշահման ու հակամրցակցային համաձայնության բացակայության մասին մասին (հավելված N 2).

2.2.3 հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջ-ներին իր տվյալների համապատասխանության մասին (հավելված N 3), պայմանով, որ սույն հրավերով նախատեսված դեպքերում մասնակիցը պարտավորվում է ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2.2.4 հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին համապատասխանության մասին (հավելված N 3.1).

2.2.5 հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին (հավելված N 3.2), պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում մասնակիցը պետք է ներկայացնի համանման (նմանատիպ) պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

2.2.6 գնային առաջարկ, որը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը (հավելված N 4): Գնային առաջարկը, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, ներկայացվում է ինքնարժեք (վաճառքի ինքնարժեք), շահույթ և անուղղակի հարկերի ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն

իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման.

2.2.7 հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (հավելված N 5).

2.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է նաև էլեկտրոնային փոստի հասցե (մասնակցի կողմից ծանուցման ստացման ավտոմատ եղանակով հետ հաստատման օգտագործման հնարավորությամբ):

2.4 Հայտում ներառվող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից: Ծրարը և դրանում ներառված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակիցը կամ վերջինիս կողմից լիազորված անձը: Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

2.5 Սույն հրահանգի 2.4 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) պարզեցված ընթացակարգի ծածկագիրը.

գ) ՝չբացել մինչև հայտերի բացման նիստը՝ բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Հավելված 1
ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԴԻՄՈՒՄ
Պարզեցված ընթացակարգին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Մասնակցի անվանումը

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____:
Մասնակցի անվանումը էլեկտորանային փոստի հասցեն

_____ _____
_____
Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20....թ.
(ամիսը, ամսաթիվը)

Հավելված 2
ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին

_____-ն հայտարարում է, որ՝
Մասնակցի անվանումը

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ.

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3)_____-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող
Մասնակցի անվանումը
երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

4) _____-ն ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք
Մասնակցի անվանումը
չունեցող մասնակիցների ցուցակում.

5) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____ _____ _____

Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20…թ.
(ամիսը, ամսաթիվը)

Հավելված 3
ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին

_____-ն հայտարարում է, որ՝
Մասնակցի անվանումը

ունի կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

_____ -ն պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած
Մասնակցի անվանումը

մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

_____ _____
_____
Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20....թ.
(ամիսը, ամսաթիվը)

Հավելված 3.1
ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին համապատասխանության մասին

Սույնով _____-ն հավաստում է, որ հայտը
Մասնակցի անվանումը

ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում անվտանգության և պահակային ծառայությունների մատուցումը:

Նախկինում կատարած պայմանագրերի				
N	Առարկան	Ծավալը*	Գումարը (դրամ)	Պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	*2*	*3*	*4*	*5*
Տարեթիվը՝.....թվական				
1.				
2.				
...				
Տարեթիվը՝.....թվական				
1.				
2.				
...				
Տարեթիվը՝.....թվական				
1.				
2.				
...				

** "Ծավալը" սյունյակում նշվում է տվյալ պայմանագրի (պայմանագրերի) կողմ հանդիսացող պատվիրատուին տվյալ գնման ընթացակագի շրջանակներում մատուցված ծառայության այն ծավալը որը կնքված պայմանագրի շրջանակում մասնակցի կողմից պահպանվել է:*

_____ _____
Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20....թ.
(ամիսը, ամսաթիվը)

Հավելված 3.2

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին
համապատասխանության մասին

Սույնով _____-ն հավաստում է, որ հայտը
Մասնակցի անվանումը

ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը պակաս չէ սույն գնման ընթացակարգի շրջանակներում կատարվող գնումների ծավալի ոչ պակաս, քան հիսուն տոկոսից: Նմանատիպ են համարվում անվտանգության և պահակային ծառայությունների մատուցումը:

_____ -ն պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած
Մասնակցի անվանումը

մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնել համանման (նմանատիպ) պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

*(սույն գնման ընթացակագի շրջանակներում ձեռքբերվելիք ծառայության՝ պահպանվող տարածքի ծավալը կազմում է՝ 28300ք.մ

_____ _____
Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20.....թ.
(ամիսը, ամսաթիվը)

Հավելված 4
ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով *ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01* ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____ առաջարկում է պայմանագիրը կատարել
Մասնակցի անվանումը

հետևյալ ընդհանուր գնով՝

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Անվտանգության և պահակային ծառայություն			

3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:
*****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____
Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20….թ.
(ամիսը, ամսաթիվը)

Հավելված 5
ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01

ք. Երևան « » _____ 2014.թ.

----------ն, ի դեմս ----------յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի (այսուհետ՝ Հիվանդանոց) կողմից կազմակերպված՝ ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով պարզեցված ընթացակարգին, պետք է ներկայացնի հայտի ապահովում և պարզեցված ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Հիվանդանոցի կողմից կազմակերպված ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով պարզեցված ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Հիվանդանոցին վճարում է տուժանք՝ ---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Հիվանդանոցը իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Հիվանդանոցին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «.....» բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով ..... հանձնարարում է«.....» բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր

Մասնակցի անվանումը

բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնման գործընթացի ավարտը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Հիվանդանոցի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

հասցեն --------
---------- բանկ
h/h ----------

տնօրեն -------

¥ստորագրություն¤

գլխ. հաշվապահ -------

¥ստորագրությունÝ¤

Կ.Տ.

Հավելված 6
***ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01** ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի

***ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01**ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Կից ներկայացնում ենք ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

_____ _____
Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20….թ.
(ամիսը, ամսաթիվը)

Հավելված 6.1
ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
Ֆինանսական միջոցների մասին

_____-ի վարկային գծի, կամ բանկային երաշխիքի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

չափը կազմում է _____ՀՀ դրամ:
թվերով/ տառերով

Կից ներկայացնում ենք _____
(բանկի հետ կնքված վարկային գծի տրամադրման մասին պայմանագիրը կամ բանկային երաշխիքը)

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 7
ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01 ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

Անվտանգության և պահակային ծառայությունների մատուցման
պայմանագիր
N ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01

ք. Երևան «___» _____ 2014թ.

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ասոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու» մի կողմից և ....., ի դեմս Ընկերության տնօրեն .....-ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **անվտանգության և պահակային ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև **Ծառայություն**) համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի (հավելված N 1):

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Կատարողը յուրաքանչյուր ամսվա Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 2):

3.2 Պատվիրատուն սույն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. Պայմանագրի գինը

4.1 Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցված Ծառայության գինը, ներառյալ ԱԱՀ-ն կազմում է ..... ՀՀ դրամ, ներառյալ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Գինը նրեռաում է նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Ծառայության մատուցման գինը կարող է փոփոխվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 10 բանկային օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի հավելվածներով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության արժեքի 0,05 %-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Այն դեպքում, երբ 'Գնումների մասին' ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքուն գնումների մասին օրենսդրության համաձայն հինք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմեհֆ ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
.....	.....
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված 1
«-----» ---------- 201__թ. կնքված
N ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության			
անվանումը	Հատկանիշները	մատուցման ժամկետը	դիմաց վճարման ժամկետը
Անվտանգության և պահակային ծառայություն	1. Պահնորդական անձնակազմի աշխատակիցների տարիքը պետք է լինի 25-55: 2.Կատարող ընկերությունը պարտավորվում է պահպանության ենթակա բոլոր պահակակետերի աշխատակիցներին հանդերձավորել համապատասխան արտահագուստով (գարուն-ամառ, աշուն-ձմեռ) և զինել ծառայությունն իրականացնելու համար (ռադիոկայան, ձեռքի դյուրակիր լապտեր, դեղատուփ) հատուկ և կապի միջոցներով: 3. Յուրաքանչյուր պահնորդ պետք է ունենա տեսադիտարկման և ահազանգման համակարգերի շահագործման համար բավարար փորձ: 4.Կատարող կողմը պարտավոր է երեկոյան հերթափոխի ընթացքում իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն, կանխել խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն): 5.Կատարող կողմը պարտավոր է գիշերային հերթափոխի ընթացքում ապահովել հերթապահ մասի և պարեկային շարժական խմբերի առկայությունը տարածքում, ինչպես նաև ապահովել գիշերային հերթափոխի աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը իր ընկերության ավտոմիջոցներով: 6.Կատարողը կազմակերպում է դասընթացներ հակահրդեհային և արտակարգ այլ իրավիճակների հարցերով: 7.Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են կատարողի կողմից:	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը	Մինչև հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը
Պահպանվող շենքեր շինությունների ,օժանդակ տարածքի և բակային տարածքների մակերեսը՝ 28300 ք.մ հասցեն, Երևան, Արմենակյան 153			

ՀՀ ԱՆ «Նորք» ՓԲԸ-ի պահպանության պահակակետերի տեղակայումը և դրանց ներկայացվող պահանջները

Պահակատեղի տեղը	**Պահակակետի քանակը և ծառայություն կատարելու ժամանակահատվածը**	**Ծառայությունը կատարողների քանակը ըստ պահակակետերի**
Կենտրոնական մուտք	***1(մեկ)պահակակետ, 12ժամ*** (ժամը 20:00-08:00), շաբաթվա 7օրը	

ԿԱՏԱՐՈՂ

.....
(ստորագրություն)

Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

.....
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 2
« » ..... 2014.թ. կնքված N ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ.՝ ըստ ամիսների՝(աճողական կարգով) ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Անվտանգության և պահակային ծառայություն													
		-	-	-	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	**... %**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » ..... 2014.թ. կնքված N ՆԻԿՀ-ՊԸԾՁԲ-14/01
ծածկագրով պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
հասցե_____	հասցե_____ _
հհ_____	հհ_____ _
հվհհ_____	հվհհ_____ _

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____ 20.....թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 20.....թ.
Պայմանագրի համարը _____
Պատվիրատուն ի դեմս_____ և Կատարողը՝ ի դեմս _____
հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20....թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N_____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ ծառայություններ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 20....թ–ից «_____» «_____» 20....թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Մատուցված ծառայության համառոտ նկարագիրը	Մատուցված ծառայության քանակական ցուցանիշները	Ծառայության մատուցման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ ծառայության մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____
Կ Տ	Կ Տ